ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ; ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

XIX, № 3, 1966

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԻՍԱԿՅԱՆ

Սովետական գիտությունը ծանր կորուստ կրեց։ Հանկարծամահ եղավ խոշոր գիտնական-բիոքիմիկոս, սովետական գիտության ականավոր կազմակերպիչ, միջազգային գիտական համագործակցության բնագավառի նշանավոր գործիչ, ՍՍՌ Միության գիտությունների ակադեմիայի նախագահության պլխավոր գիտնական քարտուղար, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր, ակադեմիկոս Նորայր Մարտիրոսի Սիսակյանը։

Ն. Մ. Սիսակյանը ծնվել է 1907 թվականի հունվարի 25-ին Հայկական ՍՍՌ Աշտարակի շրջանի Աշտարակ գյուղում, գյուղացու ընտանիքում։

Իր գիտական գործունեությունը Ն. Մ. Սիսակյանն սկսեց 1932 թվականին ակադեմիկոս Դ. Ն. Պրյանիշնիկովի լաբորատորիայում, իսկ 1935 թվականից մինչև իր կյանքի վերջը աշխատում էր Ա. Ն. Բախի անվան բիոքիմիայի ինստիտուտում։

Բույսերի երաշտակայունության բիոքիմիայի ասպարեզում կատարած հետազոտություններով Ն. Մ. Սիսակյանը առաջին անգամ պարզեց, որ երաշտակայունությունը կախման մեջ է բուսական օրգանիզմի էնդիմատիկ ապարատի առանձնահատկություններից։

Պրոտոպլազմային կառուցվածքների ֆերմենտատիվ ակտիվության ուսումնասիրությունը Ն. Մ. Սիսակյանին թույլ տվեց բացահայտել սեզոնային և տարիքային ռիթմերի գոյությունը բույսերի նորմալ մթերատվության համար։

Ավելի քան 15 տարի Ն. Մ. Սիսակյանը նվիրեց պլաստիդների, մասնավորապես քլորոպլաստների քիմիական բաղադրության ու կառուցվածքի ուսումնասիրմանը, որոնք բուսական բջջի կարևոր բաղկացուցիչ մասերն են, ինչպես նաև նրանցում այս կամ այն ֆերմենտային սիստեմների ու փոխանակման օղակների տեղայնացման ուսումնասիրմանը։

Այս աշքի ընկնող հետազոտությունների համար նրան շնորհվեց պետական մրցանակ։

Իր տեսական հետազոտությունները Ն. Մ. Սիսակյանը սերտորեն շաղկապում էր տեխնիկական բիոքիմիայի գործնական պահանջների հետ։

Մեծ է ակադեմիկոս Ն. Մ. Սիսակյանի ավանդը նոր կենսաբանական գիտության՝ տիեզերական կենսաբանության ձևավորման և զարգացման գործում։ Ն. Մ. Սիսակյանը հրապարակել է ավելի քան 400 գիտական աշխատու-

թյուն ու մենագրություն կենսաբանության և բիոքիմիայի տարբեր ոլորտների վերաբերյալ։

Նրա էրուդիցիան և լայն հեղինակությունը միջազգային գիտական հասարակայնության ընդհանուր ճանաչումն էին գտել։ Ն. Մ. Միասկյանը ընտրված էր միջազգային աստղագնացության ակադեմիայի փոխպրեզիդենտ, միջազգային աստղագնացության ֆեդերացիայի բիոաստղագնացության կոմիտեի նախագահ։

Ակադեմիկոս Ն. Մ. Միասկյանը հայտնի է որպես միջազգային գիտական համագործակցության ականավոր գործիչ։ 1959 թվականին նա ընտրվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի անդամ, իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավար կոնֆերանսի 13-րդ սեսիան նրան ընտրեց իր նախագահը։

Ն. Մ. Միասկյանը պարգևատրված է Լենինի համալսարանի և Պաստյորյան ինստիտուտի (Ֆրանսիա) մեդալներով։

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Ն. Մ. Միասկյանի գիտական ու հասարակական գործունեությունը։ Նա պարգևատրված էր Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշանով, «Պատվո նշան» շքանշանով և մեդալներով։

Խոշոր գիտնական, գիտության տաղանդավոր կազմակերպիչ Ն. Մ. Միասկյանը կոմունիստ էր և իր հայրենիքի մեծ հայրենասեր։

Նրա պայծառ կերպարը երկար կմնա բոլոր նրանց սրտերում, ովքեր նրան ճանաչում էին։

Լ. Բրեժնև, Ա. Կիրիլենկո, Ա. Կոսիգին, Կ. Մազուրով, Ա. Միկոյան, Ն. Շվերնիկ, Ա. Շելեպին, Գ. Շելեստ, Ե. Գոլդգոնի, Դ. Գոլյանսկի, Մ. Սուսլով, Դ. Վորոնով, Պ. Դեմիչև, Յու. Անդրոպով, Բ. Պոնոմարյով, Ա. Քոչինյան, Ն. Եգորիչև, Վ. Կիրիլին, Մ. Կնլգին, Վ. Համբարձումյան, Ն. Հարությունյան, Ն. Բյոխին, Ռ. Բիխովսկի, Ա. Բելոգլազովսկի, Վ. Զոտով, Վ. Ելյուտին, Բ. Կոնստանտինով, Վ. Մացկևիչ, Մ. Միլիոնշչիկով, Բ. Մուրադյան, Ա. Նեստերենկով, Ա. Օպարին, Ա. Պալլադին, Բ. Պետրովսկի, Մ. Պրոկոֆև, Ի. Պետրովսկի, Ս. Ռոմանովսկի, Ն. Սեմյոնով, Վ. Ստոլետով, Ս. Տրապեզնիկով, Վ. Տրապեզնիկով, Գ. Ֆեդոսեև, Վ. Ֆեոնիզովսկի, Մ. Շեմյակին, Վ. Էնգելգարդտ։